Լրագրողներ հանուն մարդու իրավունքների

Բանակում հանցավորության վերլուծական բնութագիրը. 2011թ.

05.04.2012

Նախաբան

Զեկույցը կազմվել է «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ մոտ 250 հրապարակումների, որոնք պատրաստվել են պետական իրավասու պաշտոնատար անձանց, տուժողների, նրանց ներկայացուցիչների, փաստաբանների հետ հանդիպումների, նախաքննական դատաքննական գործընթացների դիտարկումների, ինչպես նաև հանրային միջոցառումների ընթացքում և սոցիալական ցանցերում տեղի ունեցած բազմաթիվ քննարկումների հիման վրա:

Զեկույցում հիմնական ուշադրությունը դարձվել է այն պատճառներին, որոնք հանգեցնում են Զինված ուժերում մարդու իրավունքների, հիմնականում՝ կյանքի իրավունքի խախտումների դեպքերին: Զեկույցի առանձին հատվածներ շարադրվել են զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, տուժողների ներկայացուցիչների կամ փաստաբանների խոսքի մեջբերմամբ:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմվել և զեկույցի վերջում ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ, որոնք միտված են պաշտպանական և իրավապահ համակարգերի բարեփոխման ու մարդու իրավունքերի պաշտպանության օրենսդրական և գործնական մեխանիզմների ստեղծման միջոցով Զինված ուժերում մարդու իրավունքները երաշխավորող պայմանների ձևավորմանն ու ՀՀ պաշտպանունակության ամրապնդմանը:

1. Պաշտպանական և իրավապահ համակարգերի անկատարություն

Ժամանակակից պետության և պետական կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ հիմքերի առաջացման և այդ ինստիտուտների կայացման ու զարգացման ժամանակահատվածում հայ ժողովուրդը պետականություն չի ունեցել, իսկ Խորհրդային Հայաստանի կառավարման ավանդույթները բնորոշ են գաղութային ինքնավարությանը: Այդ պատճառով իմաստավորված ավանդույթների փոխարեն ձևավորվեցին իներցիոն կարծրատիպեր: Պետք է ընդունել, որ ժամանակակից Հայաստանում ևս առայժմ չի ձևավորել պետականաշինության և պետական կառավարման մշակույթ ու գիտություն: Խորհրդային իներցիան և կարծրատիպերը նաև իրավական նորմերի առումով հակասում են ՀՀ Սահմանադրությանը, հանգեցնելով **պետության և նրա կառավարման համակարգի խառնաշփոթության:**

Մասնավորապես՝ պետական կառավարման համակարգի ձևավորման ու գործունեության ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենքներն ու այլ

իրավական ակտերը նույնիսկ չեն տարբերակում և միանշանակ կերպով չեն սահմանում «ղեկավարում» և «կառավարում» հասկացությունները: Դրանք հաճախ տրվում են հակասական իմաստներով, կիրառվում են միմյանց փոխարեն, ինչը առաջացնում է լիազորությունների սահմանազանցման ու իրավունքների խախտման նպաստավոր միջավայր:

1.1. Պաշտպանական համակարգի ոլորտ

Հիմնական և առանցքային պրոբլեմը, որից առաջացել է պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի քաոսային իրավիճակը, սկիզբ է առնում «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասից, որի համաձայն՝ «Զինված ուժերի անմիջական ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, որը կազմակերպում և վերահսկում է զինված ուժերի և պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը»:

Խնդիրն ավելի է բարդացնում Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասը՝ «Զինված ուժերի կառավարումն իրականացնում է գլխավոր շտաբի պետը, որը հանդիսանում է զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը»:
Ընդ որում, արտասահմանադրական հարթությունում պաշտպանական համակարգի ձևավորումն ու գործառումը ոչ միայն խորհրդային իներցիայի և իրավական անգրագիտության, այլև անձնական ու հատվածական շահերի իրացման նպատակ հետապնդող կամայական լուծումների հետևանք է:

Պաշտպանական ոլորտի օրենքներն ու այլ իրավական ակտերը մի զգալի մասով ոչ միայն չեն համապատասխանում Սահմանադրությանը, այլև միմյանց, իսկ գործող պաշտպանական համակարգը մի զգալի մասով չի համապատասխանում նույնիսկ այդ հակասահմանադրական իրավական ակտերին, որովհետև օբյեկտիվորեն առաջացող բացերն ու հակասությունները կամայական կերպով ենթարկվում են կորպորատիվ, բանավոր, սովորութային արտահիրավական «կարգավորումների», ինչի հետևանքով ձևավորվել են իրավական ակտերով չնախատեսված կառավարման ենթահամակարգեր և մեխանիզմներ:

Անհասկանալի և անորոշ են Զինված ուժերի Գլխավոր հրամանատարի, գլխավոր շտաբի ու գլխավոր շտաբի պետի լիազորությունները, նրանց ու պաշտպանության նախարարի լիազորությունների ծավալներն ու սահմանները:

«Մասնավորապես, հնարավոր չէ որոշել, թե ինչպիսիք են ենթակայական հարաբերությունները հետևյալ մարմինների և պաշտոնատար անձանց միջև, եթե Օրենքի կառուցվածքի համաձայն ՊՆ-ն Զինված ուժերի մաս է կազմում, բայց, միևնույն ժամանակ՝ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներառում է այդ Զինված ուժերը, մինչդեռ ՊՆ կանոնադրության համաձայն Զինված ուժերը ՊՆ համակարգի

մաս չեն կազմում, թեև Զինված ուժերի կառավարման մարմինը՝ Զինված ուժերի գլխավոր շտաբը, պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որի ղեկավարը լինելով ամենաբարձր զինվորական պաշտոնյան, ենթարկվում է Սահմանադրությամբ հրամանատարական լիազորություններով չօժտված քաղաքացիական անձին՝ պաշտպանության նախարարին»: («Բանակի քառսի պատճառները» http://www.lragir.am/armsrc/comments-lrahos40508.html)

Այս խառնաշփոթը հանգեցնում է ոչ միայն իրավական պրոբլեմների, այլև կառավարման արդյունավետության անկման, կարգապահության և մարտունակության կորստի:

Իրավիճակը իսկապես լուրջ է և պահանջում է իրականացնելպաշտպանական համակարգի արմատական բարեփոխումներ,ուստի պատասխանատու մարմիններն ու պաշտոնատար անձինքպետք է քաղաքական կամք դրսևորեն:

Թերևս պաշտպանական համակարգի ռեալ բարեփոխման հիմնական խոչընդոտը մարդկային գործոնի բացասական ազդեցությունն է: Խորհրդային անցյալի կենդանի կրողների գերակշռությունը համակարգում բացառում է նախկինի կաղապարներից ձերբազատվելու և արմատական փոփոխություններ իրականացնելու հնարավորությունը: Այդ հարցում էական նշանակություն կարող է ունենալ սերնդափոխության ապահովումը, մինչդեռ պետությունն առայժմ նախընտրում է պահպանել ու հնարավորինս երկարաձգել նախկին կադրերի առկայությունը բանակում:

1.2. **Իրավապահ համակարգի ոլորտ**

ՀՀ իրավապահ համակարգը խորհրդայինի ժառանգորդն է: Ուստի նույն մեխանիզմով այն փաստորեն ընդամենը վավերացնում է պատժական համակարգի իրականացրած «արդարադատության» արդյունքը: Առարկայորեն դա դրսևորվում է քրեական գործի վարույթի ծավալի հիմնական մասը դատականի փոխարեն մինչդատական փուլում իրականացնելու ձևով, ինչի նպատակով ստեղծվում է մինչդատական վարույթի իրականացման՝ գրեթե անսահմանափակ և մարդու ու հասարակության կողմից անվերահսկելի լիազորություններով օժտված հզոր և կենտրոնաձիգ համակարգ, որտեղ քննիչը յուրօրինակ ձևի առաջին ատյանի դատարան է, դատախազը՝ վերաքննիչ դատարան, իսկ վերադաս դատախազը՝ վճռաբեկ դատարան:

Այս համակարգային անկատարության հետևանքով է, որ այսօրվա դատական պրակտիկայում ևս հայցերը ՊՆ քննչական ծառայության քննիչների դեմ լուծվում են ի օգուտ վերջիններիս և դատաքննությունները կրում են ձևական բնույթ :

«Խաղաղ պայմաններում զոհված զինծառայող ՏիգրանՕհանջանյանի ծնողները արդեն երկու տարի է՝ բողոքում են քննիչԳնել Մանուկյանի դեմ, համոզված լինելով, որ նա մի

տումնավորխոչընդոտել է իրենց որդու մահվան հանգամանքներիբացահայտմանը: Թվում է, թե քննիչը, իրավաբանը, պետք է թույլչտար, որ իր մասնագիտական պատվին առնչվող հարցի լուծումըձգձգվեր, այլ ասեր.
«Ես պատրաստ եմ ցանկացածհարցաքննության, ես մաքուր եմ, իզուր եք ինձ կասկածում»: Բայցմեր իրավական պրակտիկայում քննիչի նման պահվածքը անոմալիակդիտվեր, և այս բողոքը հիմնարկից հիմնարկ է «տշվում»,դատարանից՝ դատարան»
(«Բժիշկների եւ քննիչների «կաստան»»,http://www.lragir.am/armsrc/right48349.html)

Մեղադրանքի կողմի երկու կառույցները՝ նախաքննության մարմինը և դատախազությունը, շարունակում են լիարժեք կերպով տնօրինել ոլորտը: Ինչպես խորհրդային ժամանակներում, դատախազը դետերմինացնում և կանխորոշում է դատարանի վարքը: Նման պայմաններում զրոյանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված բոլոր դատավարական երաշխիքները, անտեսվում ու զրոյանում է մրցակցության սկզբունքը, ինչը հանգեցնում է մնացած բոլոր, մասնավորապես՝ օրինականության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, միայն դատարանի կողմից արդարադատության իրականացման դատավարական սկզբունքների անգոյացմանը:

Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքներից ու նորմերից բխում է, որ արդարադատությունը պետք է մրցակցային սկզբունքով իրականացվի դատարանում, այլ ոչ թե պատժական գործառույթ կատարող մեղադրանքի կողմի միջոցով ու նրա սցենարով՝ մինչդատական վարույթի փուլում՝ դատական փուլում դրա միայն ձևական պատճենմամբ: Սակայն պետությունը դեռ չի գիտակցում դրա կարևորությունը:

2. Քրեածին իրավիճակը բանակում: Կոռուպցիան որպես քրեածինգործոն

2.1. Քրեածին իրավիճակի ընդհանուր բնութագիրը

«Բանակում քրեածին իրավիճակը կտրուկ վատթարացավ կանոնավոր զորամասերի ստեղծմանը զուգընթաց: 1990-ականների երկրորդ կեսից արձանագրվեց այդ լարվածության մարման դրական դինամիկա: 1990-ականների վերջին իրավիճակը կայունացավ՝ մարման թույլ տենդենցով պահպանվելով մինչև 2008 թվականը: 2009 թվականից կրկին տեղի ունեցավ քրեածին իրավիճակի լարվածության կտրուկ աճ, ինչը որոշակի տատանումներով պահպանվում է մինչ օրս: Քրեածին իրավիճակի վատթարացումը պայմանավորված էր արցախյան ազատամարտի վերջին փուլում (1993-94 թվականներ) հետզհետե արմատացող և ծավալվող բացասական երևույթներով, որոնք մինչ օրս էլ գրեթե անփոփոխ կերպով առկա են մեր իրականությունում»: («Հայկական բանակը հայկական չէ»,http://www.lragir.am/armsrc/comments50533.html)

Ըստ այդմ՝ ձևավորվեց նաև բանակի բարձրագույն և մասամբ նաև՝ ավագ հրամանատարական կազմը: Առանձնակի կարևորություն չտրվեց բանակի սպայական

ու հրամանատարական կազմի կրթությանը, նրանց ըստ մարդկային և մասնագիտական դրական որակների ընտրելուն: Ընդհակառակը, հաճախ նախապատվությունը տրվում էր մարդկային և մասնագիտական ցածր որակներ ունեցողներին, քանի որ այդպիսիք հեշտ կառավարելի են:

«Նարեկ Այվազյանն, անշուշտ, գիտակցում էր, թե ով է իր առջև կանգնած մարդը, բայց նա խնդրին մոտենում էր գրագետ, արժանապատվորեն, իսկական սպային վայել կեցվածքով ու տղամարդավարի: Նա նույնիսկ նախկին զորամասի հրամանատարին կոչ արեց զուսպ լինել իր մոր հետ խոսելիս, երբ վերջինս տղային պաշտպանելու նպատակով ռեպլիկներ էր նետում, իսկ Խաչատուրովը կոպտորեն ընդհատում էր նրան: 22 ամյա երիտասարդը չէր կարողանում հարմարվել ստին ու կեղծիքին և անարդարության զգացումից նրա շունչը կտրվում էր, բայց նա չէր զիջում իր դիրքերը և բոլորովին կարևորություն չէր տալիս, որ իր առջև կանգնածն այդ «հզոր» Խաչատուրովն է: Կարևորն այն էր, որ ինքն ասում էր ճշմարտությունը և չէր ուզում հարմարվողականի կեցվածք ընդունել»: («ՍՊԱՅԻՆ ՎԱՅԵԼ ԿԵՑՎԱԾՔ»,http://www.lragir.am/armsrc/right44149.html)

Հրամանատարական բոլոր օղակներում (բարձրագույն հրամանատարական օղակում՝ ավելի ընդգծված կերպով) սկսեց գերիշխել քրեական, մարդատյաց, գռեհիկ մտածելակերպը: Տիրապետող դարձավ մարդուն, զինծառայողին, հատկապես՝ շարքային զինվորին, որպես ռեսուրս դիտելու հոգեբանությունը: Դրան հետևեց զանգվածային անտարբերությունը մարդու ու զինվորի նկատմամբ: Ներքաշվելով «խաղի» մեջ, հասարակությունն սկսեց հակադարձել և գոյության ու կայացման կռիվ մղել այդ «խաղի կանոններով»:

Բանակ զորակոչվող շարքային կազմը սկսեց գործադրել քրեական աշխարհի օրենքներով ապրող փողոցի զինանոցը, իսկ հրամանատարությունը ներդրեց «պետություն-քրեական աշխարհ» երկուստեք ձեռնտու համագործակցության մեխանիզմը և դրա միջոցով ձեռք բերեց ինչպես շարքային կազմի վերահսկելի ինքնակառավարում, որն իրեն ազատում էր անձնակազմի հետ ամենօրյա աշխատանք տանելու հոգսի մի զգալի մասից, այնպես էլ լրացուցիչ նյութական շահի հնարավորություն:

«Թեեւ գործը պարզ է՝ մի քանի զինծառայողներ հաշիվ են պահանջել մեկից, ծեծել են, նվաստացրել, որից հետո ծեծվող և նվաստացված երիտասարդը մահացել է: Կռված տղա լինելով և լայն զինվորական շրջապատ ունենալով, Վարդան Հակոբյանը հարցուփորձ է արել և պարզել է, որ զորամասում ավտոմատ է կորած եղել: Գողացողները զորամասի «լավ տղերքն» են եղել, որոնց հարցաքննել է «զամպոլիտ» Սամվել Սարիբեկյանը: Այս գողության մասին տեղեկություններ հայտնելու համար է, ըստ Վարդան Հակոբյանի,պատժվել իր որդին»: («Դատախազ Այվազյան Հրաչի փակած գործը»,http://lragir.am/armsrc/right48607.html)

2.2. Կոռուպցիան որպես Քրեածին իրավիճակի վատթարացմանը նպաստող գործոն

Բանակում կոռուպցիայի առկայությունը չեն ժխտում անգամ համապատասխան պաշտոնատար անձինք:

Բանակում կոռուպցիային նպաստող գործոններից կարելի է նշել.

- Գաղտնիության պատճառով նվազ վերահսկելիության ռեժիմում գործելու հնարավորությունները, այդ թվում՝ զորակոչի միջոցով համալրման

- Առողջական պրոբլեմներ ունեցողների զորակոչի, նորակոչիկների տեղաբաշխման, շարքային կազմի առօրյայի նկատմամբ

- Զինված ուժերի գործունեության իրավական ու կազմակերպական բաղադրիչների, այդ թվում՝ կադրերի ընտրազատման ու պաշտոնեական առաջխաղացման մեխանիզմների անկատարությունը

- Զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության սահմանադրական լիազորությունների անբավարարությունը

- Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության ինստիտուտների ու մեխանիզմների կայացած չլինելը

- Պաշտպանական կարիքների համար իրականացվող գնումների՝ հաճախ չհիմնավորված փակ ընթացակարգերը

«Նորություն չէ, որ վառելիքի վաճառքը բանակում ստվերային եկամուտի աղբյուր է: Թվում է, թե կոռուպցիայի դեմ ակտիվորեն պայքարող մեր իրավապահներն ու արդարադատության մարմինները պետք է հատկապես ուշադիր լինեն նման դեպքերի բացահայտման և մեղավորներին պատժելու հարցում: Գործնականում սակայն հակառակն է լինում: Վառելիքի վաճառքին առնչվող երկու գործ է վերջերս հայտնվել հանրության ուշադրության դաշտում: Մեկը դեռ նախաքննության մեջ է և առնչվում է խաղաղ պայմաններում զոհված զինծառայող Վալերի Մուրադյանի մահվանը: Քննիչներն այն փորձում են ներկայացնել որպես ինքնասպանություն բջջային հեռախոսի առքուվաճառքից գոյացած 3 հազար դրամ պարտքի պատճառով: Զոհվածի մայրը՝ Նանա Մուրադյանը հայտարարում է, որ որդուն սպանել են վառելիքի գողությանը ականատես լինելու համար: Մահից մի քանի օր առաջ նա պատմել էր մորը տեսածի մասին: Այս վարկածը, կարծես թե, ուշադրության չի արժանանում նախաքննության մարմնի կողմից»: («Վառելիքի «բիզնես» բանակում»,http://www.lragir.am/armsrc/print.right50270):

3. Պետության և նրա ներկայացուցիչների վերաբերմունքը զոհերի ու նրանց հարազատների նկատմամբ

Զոհերի և նրանց հարազատների նկատմամբ պետության ու նրա ներկայացուցիչների վերաբերմունքը տատանվում է անտարբերության և ակնհայտ թշնամանքի տիրույթում:

«Էրեխուն դիահերձում են, դեռ չվերջացրած, զանգահարում են,կամանդիրը վռազացնում ա, ասում ա՝ Վարդանին պիտի բերեք,հաջորդ օրը թաղեք: Ուղարկում է, հանձնի մայր հողին, հետքերըկորցնի, որ տե'ս, սրա հերը խեղճուկրակ մարդ ա, փախստական ա,հայերեն երկու բառ չի կարում խոսա, դե մերն էլ կորած, մոլորվածմայրա: Էլ չի իմանում, որ ես էրեխուս հիշատակը վառ եմ պահելու:Ես մինչեւ վերջ էլ բողոքելու եմ», - ասում է Սուսաննա Սեյանը»:(«Էրեխուս հիշատակը վառ եմ պահելու»,

http://www.lragir.am/armsrc/right52215.html3)

Մեծ թիվ են կազմում այն դեպքերը, երբ զինվորները դարձել են իրենց հրամանատարների բռնության զոհը: «**Ազգությամբ հույն Վալերի Շոնովի ծնողները համոզված են, որ իրենց որդուն սպանել են դաժանորեն: Նրանք պատմում էին, որ իրենց որդին պարբերաբար ծեծի է ենթարկվել զորամասի հրամանատարական կազմի կողմից: «Մի անգամ էլ տղաս զանգեց, թե մամ հասեք, ինձ սպանում են…,- պատմում էր մայրը՝ տիկին Էմման,- նրան մշտապես ծեծի է ենթարկել Արման անունով հրամանատարը, երբ Վալերոն ծառայում էր Ջիլիզա սահմանապահ ուղեկալում, ասում էր, մամ ջան, չի նայում, թե որտեղիս ա խփում….»:**
Ծնողները չեն բացառում, որ դեպքի հետքերը կարող են տանել դեպի սույն հրամանատարը, որն ըստ ամենայնի չի հարցաքննվել նախաքննական մարմնի կողմից»: («Ինքնասպանության սցենար»,http://www.lragir.am/armsrc/right45272.html3)

Զգալի թիվ են կազմում դեպքերը, երբ զինծառայողները բռնության են ենթարկվել իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Այսպիսով, Արտակ Նազարյանի գործով տուժողի իրավահաջորդն ու ամբաստանյալները միասնական են: Ահա թե ինչ են պատմում ամբաստանյալների ծնողները:

Հովհաննիսյան Ջավահիր, ամբաստանյալ Ադիբեկ Հովհաննիսյանի մայր. «Ադիբեկն ու Արտակը շատ էին մտերմացել: Որ դեպքը կատարվել էր, գնացինք ռազմական ոստիկանություն, Շամշադին, տարան մեզ սենյակ՝ երեխես էնտեղ էր: Ուզեցա, որ ոտքերը բացեն, ասեց՝ կեղտոտ են: Քննիչն ասել է Ադիբեկին, Մադաթյան Սաքոն, առաջին քննիչը՝ գրի մեկի անունը, պետք է մեկի անունը գրես, ես քեզ կտանեմ Երևան, լավ տեղ կծառայես: Ինքը ասել է, ոնց կարամ գրեմ: Բերդ քաղաքում իրան դաժանաբար ծեծել են»:

Կիրակոսյան Մանուշ, ամբաստանյալ Հարութիկ Կիրակոսյանի մայր:«Իրան շատ են ծեծել, ոտքերը լրիվ լխկել էին: Դեղեր ենք առել ուղարկել ենք, բայց չթողեցին բացենք ոտքերը: Ինքը դեղ է ուզել, ուղարկել եմ»:

Մանվել Մխիթարյան, ամբաստանյալ Մանվել Մխիթարյանի հայր.«Բոլորի նկատմամբ բռնություն են գործադրել: Տղայիս ասել են, որ պետք է գրես էս ինչ մարդու վրա: նա էլ ասել է. «Բայց զինվորներն ի՞նչ են արել, որ ես զինվորների վրա գրեմ»: Ասել են՝ դե, քեզ վրա եմ գրելու»: («Ահեղ դատաստանից Տավուշում էլ չես պրծնի»,http://www.lragir.am/armsrc/right58988.html3)

Շատ ավելի մեծ թիվ են կազմում բանակի և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից զոհերի ճակատագրի նկատմամբ անտարբերության, համակարգի, բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու նրանց հովանավորյալների շահերի պաշտպանության, ինչպես նաև կոռուպցիոն նպատակներով հանցագործությունների իսկական մեղավորներին կոծկելու, ապացույցները խեղաթյուրելու, անմեղ մարդկանց դատապարտելու և այլ հակաօրինական քայլեր կատարելու դեպքերը:

«Գորիսի զորամասից՝ Ճամբարակ գյուղ 19 ամյա Վարդան Սևյանի դին ուղեկցողները քաղաքացիական հագուստով զինվորականներ են եղել: Նրանք թողել են 19 ամյա տղայի անկենդան մարմինն ու հեռացել: Զորամասից որևէ մեկը չի մասնակցել թաղման արարողությանը և ոչ էլ պատվո պահակ են կանգնել զինվորական ծառայության ընթացքում մահացած զինվորի կողքին, ինչպես անում են սովորաբար: «Զինվորի մայր եմ կոչվում, անտեր մնա իմ նման զինվորի մայրը: Էրեխուս դիակը բերելա դրել սեղանիս, ես իրա դեմքը չեմ տեսել, կամանդիրն էնքան մակարդակ չուներ գար ընկներ ոտներիս տակ, ասեր մայր, էս ինչ զինվոր ես կորցրել դու, ներողություն խնդրեր, նա պիտի միլլիոն անգամ ներողություն խնդրեր, բայց գոնե մի անգամ ներողություն չի խնդրել», - ողբում է զինվորի մայրը»: («Էրեխուս հիշատակը վառ եմ պահելու»,http://www.lragir.am/armsrc/right52215.html3)

Զոհվածների հարազատներն անտեսված են: Նրանց բողոքներն ու գանգատները բախվում են պետական բյուրոկրատական կառույցի խուլ պատերին: Հատկապես իրավապահ ոլորտի վերջին ու վերին ատյանի՝ դատական համակարգի ընդգծված աչառու, կանխակալ վարքագիծը զոհերի հարազատներին հասցնում է հուսահատության եզրին: Տարիներով քննվող բազմաթիվ քրեական գործեր կան, որոնց հետ հպանցիկ ծանոթացումից հետո անգամ ոչ մասնագետի համար ակնհայտ է դառնում սուբյեկտիվ և ոչ արդարացի մոտեցումը:

«Արդեն 5 տարի է նախաքննության մարմինը, որի միակ վարկածը էլեկտրահարումն է, չունի այն սարքավորումը, որն, իբր, առաջացրել է զինծառայողի մահը: Այլ կերպ ասած, քննիչները 5 տարում չեն գտել էլեկտրականության աղբյուրը, բայց վստահ են, որ Տիգրանը էլեկտրահարվել է: Քրեական գործում մինչ օրս երկու իրարամերժ դատաէլեկտրատեխնիկական փորձագիտական եզրակացություններ են եղել:

Դրանցից մեկով, որը կազմել է ՀՀ Փորձագիտական կենտրոնի փորձագետ Գենադի Հարությունյանը, հաստատվում է, որ Տիգրանն էլեկտրահարվել է: Մյուսով, որը կատարվել է անկախ փորձագետների մասնակցությամբ, սահմանվում է, որ հոսանքը

թույլ էր և չէր կարող մահ պատճառել մարդուն: Սա է եղել պատճառներից մեկը, որով ընդհանուր իրավասության դատարանը ժամանակին մերժեց ռադիոկայանի պատասխանատուներին առաջադրված մեղադրանքը և գործն ուղարկեց նոր քննության»:(«Փնտրվում է ռադիոկայան» , http://www.lragir.am/armsrc/right56586.html):

Առավելագույն դրսևորվում է զոհերի հարազատներին դռնեդուռ քարշ տալու, այդպես նրանց զանազան տրամաչափի մի պաշտոնյանից մյուսի հայեցողությանը հանձնելու միջոցով հոգեբանորեն հյուծելու պրակտիկան: Քիչ չեն դեպքերը, երբ բարձրաստիճան պաշտոնյաներն ընդունում են նրանց, լսում նրանց բողոքը, երբեմն նույնիսկ հուզվելու նշաններ ցույց տալիս և/կամ մեծադղորդ հայտարարություններ են անում, որ կարճ ժամկետում ամեն ինչ կկարգավորվի, սակայն սայլը տեղից չի շարժվում: Այդ գործելակերպի հնարավոր արդյունքներից մեկն էլ ժամանակի սպառումն է, որի ընթացքում համակարգը հնարավորություն է ստանում ապահովելու քրեական գործերի ընթացքը ցանկալի հունով:

4. Սպանություններ և ինքնասպանություններ

Խիստ մտահոգիչ է ՀՀ Զինված ուժերում մահվան ելքով դեպքերի քանակությունը: Մամուլում հրապարակված տվյալների համաձայն հրադադարից հետո՝ 1994 թվականի մայիսի 12-ից առ այսօր շուրջ 1500 զինծառայողներ զոհվել են խաղաղ պայմաններում: Դրանց մեջ հատկապես անհանգստացնող չափերի են հասնում սպանություններն ու ինքնասպանությունները: Սպանությունների և ինքնասպանությունների նման մեծ քանակի պատճառներն են զորամասերում տիրող անհարիր բարոյահոգեբանական վիճակը, Զինված ուժերի համալրման և զինվորական ծառայության ընթացքում համակարգային կերպով դրսևորվող խտրականությունը, իրավապահ մարմինների անբարեխիղճ, երբեմն հանցավոր գործունեությունը:

4.1 Բարոյահոգեբանական վիճակը զորամասերում:Խտրականությունը որպես բարոյա հոգեբանական վիճակիվատթարացման գործոն

Զորամասերում բարոյահոգաբանական վիճակը հեռու է բավարար լինելուց: Ճիշտ է, անցած տարիների ընթացքում ծավալի առումով ահռելի աշխատանք է կատարվել այն շտկելու համար, սակայն արդյունքը դեռ զոհացուցիչ չէ: Համատարած անարդարությունը, կոռուպցիան, ապօրինությունները, բռնությունները, քրեական մշակույթի առկայությունը, իսկ երբեմն՝ գերակշռումը, հրամանատարների ու սպաների բացասական անձնական օրինակը խիստ նվազեցնում են դաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը:

«Տարրական կենսապայմաններից զուրկ ծայրամասայինզորամասեր քշվեցին ազգակց ական ու բարեկամական կապերչունեցող, նաև թերուս, մանկավարժական գիտելիքներ ից ևհմտություններից զուրկ ու մնացորդային եղանակով ընտրված,պատերազմից վնա սվածքներ և հիվանդություններ ժառանգածսպաներն ու ենթասպաները: Նրանց որպես

ենթականերհանձնվեցին անապահով, անպաշտպան սոցիալական խմբերինպատկանող ընտանիքներից սերող նորակոչիկներ, որոնց մի զգալիմասը հասցրել էր խմել կյանքի դառնությունների բաժակը, որըխեղճացել էր, որը դաժանացել, մյուսները առողջական նհոգեբանական պրոբլեմներ ունեին, շատերը դպրոցը չէին ավարտել,զգալի էր նաև քրեական անցյալով կամ այդպիսի միջավայրիազդեցությունը կրողների թիվը»: («Եղնիկն ե՞ր», թե «գայլեր»»,http://www.lragir.am/armsrc/comments55072.html)

Անարդարությունն աղաղակող է: Զորակոչիկը հենց հավաքակայանից է զգում իր նկատմամբ խտրական ու սպառողական վերաբերմունքը: Ավելին, նա այդ մասին գիտի մինչ հավաքակայան գալը՝ տնից, դպրոցից, հարևաններից: Անապահով ու խեղճ ընտանիքի երեխան գիտի, որ ինքը դատապարտված է հայտնվելու այդ դժոխքում: Զորակոչիկները գիտեն, որ այնտեղ մի խնդիր են ունենալու՝ ամեն գնով վերապրել:

«Վառ երևակայություն պետք չէ ունենալ պատկերացնելու համար,թե ինչպիսին է եղել վերաբերմունքը հիվանդ զինվորի նկատմամբզորամասում:
«Հիվանդ է եղել, դիմել է հրամանատարին,հրամանատարն ասել է, թե սուտ ես ասում, գլիցերին ես քսել աչքիդ,դրա համար աչքդ չի փակվում, դու «սաչկավատ» ես անում, պի տիվազես: Էրեխեն էլ էդպես հիվանդ վազել է, հաջորդ օրը դեմքըպարալիզացվել է, էդ վիճակով էդ օրն էլ վազել տվել, գիշերն էլկարաուլ է կանգնել…», -
պատմում են զինվորի հարազատները: Իսկմեկ օր անց զինվորին ճանապարհել են մահվան»: («Սաչկավատի զոհերը», http://www.lragir.am/armsrc/right58765.html3)

Սպաների ու ենթասպաների համար չի գործում ռոտացիոն համակարգ: Մեկ անգամ այդպիսի զորամասում հայտնվելով, նրանք կարծես թե դատապարտված են այնտեղ մնալու անհայտ ժամանակով: Շատերը չեն կարողանում ընտանիք կազմել, իսկ ամուսնացածներն էլ ապրում են ընտանիքներից կտրված վիճակում: Չկան աշխարհի հետ հաղորդակցվելու, ինֆորմացիա ու գիտելիք ձեռք բերելու տարրական հնարավորություններ: Այդպիսի իրավիճակում երկար ժամանակ գտնված սպան հոգեպես աղճատվում և մտքով խեղճանում է այն աստիճան, որ այլևս ի վիճակի չի լինում շարունակել կրթությունը և զարգանալ՝ փաստորեն իրականում դառնալով հետագա ծառայության համար ոչ պիտանի:

Այդ զորամասերում նախարարների ու գլխավոր շտաբի պետերի, բարձրաստիճան զինվորականների որդիները չեն ծառայում: Չգիտես ինչու, վերջին տարիներին կիրառվող վիճակահանության «թափանցիկ» համակարգը նրանցից ոչ մեկին այդտեղ չի ուղարկում:

Խտրականությունը համապետական մասշտաբի երևույթ է, այն պետական ու հանրային կյանքի կազմակերպման ու գործունեության հիմնական սկզբունքներից մեկն է: Այդ սկզբունքի կիրառումը ծայրամասային բնակավայրերն ու այնտեղ տեղակայված զորամասերը դարձնում են անարդարացիորեն աքսորի դատապարտվածների, լքվածների, մոռացվածների և մյուսների բեռը կրողների

միջավայր՝ այդտեղից բխող հետևանքներով: Այդպիսի պայմաններում կանոնագրքերի պահանջների կատարումը հաճախ ձևական է լինում, ինչը չի կարող ապահովել բավարար կարգ ու կանոն:

Նման պարագայում օրենքով սահմանված համակարգերին ու մեխանիզմներին զգալի չափով փոխարինում են ոչ ֆորմալ՝ քրեական մշակույթի հիման վրա գեներացված համակարգերն ու մեխանիզմները: Առաջանում են ոչ ֆորմալ՝ քրեական միջավայրին բնորոշ լիդերներ և հարաբերություններ, ինչը բանակային միջավայրը համապատասխան մասով վերածում է քրեական միջավայրի:

Այս ամենի հետևանքով քրեական միջավայրին բնորոշ երևույթները՝ կաստայականացումը, դրամաշորթությունը, բռնությունը, ստորացումները, հաշվեհարդարները դառնում են առօրյայի մաս: Բնական է, որ նման իրավիճակում կարող են պատահել նաև սպանությունների, ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու և ինքնասպանության հասցնելու դեպքեր, որոնք այս սառցալեռան երևացող մաս են միայն:

«Երեխաս սպանված էր ծեծից, յոթ հոգով ծեծել են աֆիցեռիգլխավորությամբ, էրեխես մ եռած էր, վրան գիտակցություն չկար,դեմքը կապտած էր, ուռած ականջը գլխից կախվա ծ, ձեռքերի վրասիգարետով այրված հետքեր... Չգիտեմ, ես երեխայիս բանակ էիուղարկ ել, թե գազանանոց», վրդովված պատմում է զինվորի հայրը,ով կանգնած է եղել հայոց բ անակի ստեղծման ակունքներում,մասնակցել է պատերազմին մինչև ավարտ ու պատր աստ եղել իրկյանքը տալ հայրենիքի համար: Բռնության հետքերը փոքրամարմինզինվ որի մարմնի տարբեր մասերում շարունակում են պահպանվել:Աջ ոտքը ամբողջությամ բ վերքերի մեջ էր, ականջը ջախջախված,ձեռքերի վրա առկա են ծխախոտով այրված հե տքերը: 19-
ամյազինծառայողին Կանազի հոսպիտալ են տեղափոխել «սուր փսիխոզ»ախտորոշմա մբ»: («Իսկ եթե ձեր երեխաներին սպանեն»,http://www.lragir.am/armsrc/right54552.html3):

4.2 Նախնական և դատական քննության անարդարությունն ու ոչիրավաչափությունը

Որակման խնդիրը. որակումը որպես մանիպուլյատիվ գործիք

Հանցագործության ճիշտ որակումը կարևոր դեր է խաղում օրինականության պահպանման, հանցագործության վտանգավորության աստիճանի ճիշտ գնահատման, հանցագործության պատճառած վնասի որոշման, արդարացի պատժի, դրա տեսակի և չափի սահմանման, ինչպես նաև հանցակազմի որոշման և նման հանցակազմերի տարանջատման ու տարբերակման գործում:

ՀՀ զինվորական դատախազ Գ. Կոստանյանի պաշտոնավարմանը համընկնող ժամանակահատվածում քրեական գործի հարուցման փուլում Զինված ուժերում տեղի

ունեցած մահվան ելքով դեպքերի մեծ մասը որակումն է ոչ թե սպանության, այլ ինքնասպանության հասցնելու, իսկ վերջին տարբերակի անհնարինության դեպքում՝ սպանությունից ավելի մեղմ պատիժ նախատեսող այլ հանցագործության հատկանիշներով: Մինչդեռ մահվան ելքով դեպքերը քրեական գործի հարուցման փուլում պետք է որակվեն սպանության հատկանիշներով:

ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում սպանության և ինքնասպանության հասցնելու հանցավոր արարքները նախատեսված են համապատասխանաբար 104 և 110 հոդվածներով: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի՝ սպանությունը ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է: ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածը ինքնասպանության հասցնելու արարքը բնութագրում է հետևյալ կերպ. «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»:

Պետք է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք. որպես կանոն, մահվան ելքով գործերի պարագայում քրեական գործի հարուցման փուլում հնարավոր չէ միանշանակ կերպով որոշել, թե արարքի հատկանիշները բավարար են մարդու մահվանը հանգեցրած արարքի ճշգրիտ որակման համար:

«Ուստի նախընտրելի և նպատակահարմար է ղեկավարվել քրեականպատժի նպատակ ի իրագործման ու տրամաբանությանգերակայությամբ և քրեական գործը հարուցել սպ անությանհատկանիշներով: Այս մոտեցումը հիմնավոր է նաև այն պատճառով,որ վերա բերում է բարձրագույն արժեքին՝ մարդու կյանքին:Հակառակ պարագայում, նույնիսկ ս պանությունը որպես երկրորդվարկած աչքի առաջ ունենալու դեպքում, հետաքննությա ն ննախաքննության մարմիններն ի սկզբանե կսահմանափակվենհանցագործության ի րական պատկերը վերականգնելու, մեղավորանձանց լրիվ շրջանը բացահայտելու և ըս տ մեղքի աստիճանինրանց պատիժն ապահովելու իրենց հնարավորությունները՝ օբյեկ տիվ նախադրյալներ ստեղծելով հակառակի համար»:(«Ինքնասպանության «ինովացիան»»,http://www.lragir.am/armsrc/right52675.html)

Նման պարագայում ՀՀ զինվորական դատախազի դատավարական ղեկավարությամբ գործող հետաքննության և նախաքննության մարմինների՝ ՀՀ Զինված ուժերում տեղի ունեցած մահվան ելքով դեպքերը ինքնասպանության կամ օրենքով ավելի մեղմ պատիժ նախատեսող այլ հանցագործության հատկանիշներով հարուցելու գործողությունները հիմնավոր կասկածներ են առաջացնում կանխամտածված և ուղղորդված քաղաքականության առկայության վերաբերյալ:

«Մինչ օրս իրավապահ մարմինների աշխատանքը գնահատվում է բացահայտված հանցագործությունների տոկոսային ցուցանիշի, ինչպես նաև այլ քանակական ցուցանիշների վրա հիմնված սկզբունքի համաձայն: Եվ քանի որ սպանությունը

առանձնապես ծանր, իսկ ինքնասպանության հասցնելը՝ միջին ծանրության հանցագործություն է, ապա գերադասելի է ունենալ միջին ծանրության հանցագործությունների չբացահայտված դեպքեր: Այս տարբերակն ավելի նախընտրելի է դառնում, երբ ի սկզբանե իրավապահ մարմինները հակված չեն հանցագործությունը բացահայտելուն, ինչի նպատակով ձգտում են ձևավորել հանցագործության աղավաղված պատկեր և թաքցնել իսկական մեղավորներին կամ գոնե դրանց առավել «արժեքավոր» մասին:

Հենց այս նպատակին է ծառայում մահվան ելքով գործերը առավելապես ինքնասպանության հասցնելու հատկանիշներով որակելը: ՀՀ զինվորական դատախազը և նրա դատավարական ենթակայության ներքո գտնվող հետաքննության ու նախաքննության մարմինները ձգտում են հնարավորինս պահպանել բանակի վարկն ու հեղինակությունը»: (««Այս երեխային ինչպե՞ս են ուղարկել Ղարաբաղ». Տեսանյութ»,http://www.lragir.am/armsrc/right59533.html»):

Ուղղորդված քաղաքականության գոյության անուղղակի ապացույցներ են նաև քննության ընթացքում տուժող կողմի ու հասարակայնության ներկայացրած ապացույցների հետազոտումից հնարավորինս խուսափելու պրակտիկան, ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի բոլոր փուլերում իրավապահ համակարգի աշխատակիցների թույլ տված աղաղակող ապօրինությունները (այդ թվում՝ դեպքի վայրի կեղծումները, ապացույցների աղավաղումը, կեղծ ապացույցների ստեղծումը) կոծկելու զանգվածային գործողությունները, ինչպես նաև դրանց հակառակ գործողությունների բացակայությունը: Միևնույն ժամանակ, սպանությունը ինքնասպանության հասցնելու հատկանիշներով գործի հարուցումը տուժող կողմին հոգեբանական ճնշումների և մանիպուլյացիայի ենթարկելու լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում:

5. **Կյանքի իրավունք: Պետության պոզիտիվ պարտականությունը**

Պետությունը պարտավոր է արդյունավետ իրավական կարգավորմամբ կանխել մարդու իրավունքների իրականացման ընթացքին այլ անձանց կամայական միջամտությունը, իսկ միջամտության դեպքում՝ ձեռնարկել այդ միջամտությունից պաշտպանելու արդյունավետ միջոցներ:Կյանքի իրավունքը մարդու ապրելու իրավունքն է: Կյանքի իրավունքը, որպես գերագույն իրավունք, մարդու իրավունքների համակարգում ունի առաջնային բնույթ: Մարդուն զրկելով կյանքի իրավունքից, ըստ էության դրանով ոտնահարվում են նրա մնացած բոլոր իրավունքները:

Պետությունը անվերապահ պարտականություն ունի պաշտպանել իր իրավասության տարածքում հարկադրաբար գտնվող մարդկանց կյանքը, բացառությամբ այն դեպքերը, երբ անձի մահը վրա է հասել պատերազմական գործողությունների հետևանքով, որը կարգավորվում է միջազգային մարդասիրական իրավունքի՝ պատերազմներ վարելու կանոնների վերաբերյալ նորմերով:

1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը, 1950 թ. մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը, իսկ ավելի ուշ՝ 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածն ամրագրեցին մարդու կյանքի իրավունքի երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմաթիվ գործեր է քննել Կոնվենցիայով պաշտպանվող կյանքի իրավունքի վերաբերյալ: Դատարանը պետությունների կողմից իրենց կոնվենցիոն պարտավորությունների կատարումը գնահատելիս կարևորություն է տալիս այն հարցին, թե նրանք ինչպիսի արդյունավետությամբ են իրականացնում իրենց "պոզիտիվ պարտավորությունները», արդյոք պետությունները պատշաճ միջոցներ ձեռնարկում են, որպեսզի ապահովեն մարդկային կյանքը:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի և դրա վերաբերյալ Դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համատեքստում կարելի է առանց վարանելու ասել, որ Հայաստանի Հանրապետությունում զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության հարցում պետության պոզիտիվ պարտավորությունների կատարման համար բավարար պայմաններ չկան:

«Դատավարության ընթացքում պետությունը չի ներկայանում իբրև պատասխանատվությունը կրող, այլ հանդես է գալիս մեղադրողի դիրքերից, կոպիտ և չեզոք վերաբերմունքը ավելի է ծանրացնում պետության պարտականությունները տուժողների հանդեպ», - սա փաստաբան Վահե Գրիգորյանի կարծիքն է, որը նա հայտնել է«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» կազմակերպության անցկացրած իրավական սեմինարի ժամանակ: Ըստ փաստաբանի, բանակը, քրեակատարողական հիմնարկը պետության անմիջական վերահսկողության տակ գտնվող տարածքներ են, և այդ տարածքներում հարկադրաբար գտնվող անձանց կյանքի իրավունքի պաշտպանության համար պետությունն անմիջական պատասխանատվություն է կրում: «Եթե անգամ չի բացահայտվել զինվորական ծառայության մեջ գտնվող անձի սպանությունը կամ ինքնասպանությունը, միևնույն է, տուժողի իրավահաջորդի հանդեպ պատասխանատվությունը կրում է պետությունը», - համոզված է Գրիգորյանը: Իրականությունն ու մեր դատական պրակտիկան, իհարկե, այլ են»: («Որ զինվորին գիշերով չվազեցնեն»,http://www.lragir.am/armsrc/right58339.html):

5.1 Անպատժելիություն

ՀՀ Զինված ուժերում տեղի ունեցած մահվան, հատկապես սպանությունների և ինքնասպանության հասցնելու դեպքերի մասով մեղավորներին հայտնաբերելու և պատժելու հարցում պետության թերացումն ու անգործությունը, հաճախ նաև՝ հանցավորներին կոծկելու գործելակերպը պետական քաղաքականության

դրսևորումներ ունի: Ակնհայտ է, որ գրեթե բոլոր զոհերը անապահով խավի ներկայացուցիչներ են: Մինչդեռ դահիճները հաճախ չեն բացահայտվում, իսկ երբեմն էլ նրանց փոխարեն պատասխանատվության են կանչվում անապահով խավի ուրիշ ներկայացուցիչներ: «**Բայց որքան էլ որոշենք, որ անհնար է, որքան էլ հարցնենք իրար, թե ինչ է կատարվում բանակում, իրավիճակն առայժմ չի փոխվում: Ընդ որում, մահերի վիճակագրությունից , «ինքնասպանություն» խրոնիկական ախտորոշումից առավել նյարդայնացնում է այն, որ զոհվում են հիմնականում ամենաաղքատ խավից զորակոչվածները: ՊՆ ղեկավարությունը, բանակին մոտ կանգնած պաշտոնյաները վստահեցնում են, որ մահվան դեպքերը բանակում նվազել են: Հասարակության շոկը նրանք բացատրում են ՊՆ-ի բաց աշխատանքով, որ առաջ ողբերգական դեպքերի մասին լռում էին, իսկ հիմա անմիջապես տեղեկացնում են հանրությանը: Համաձայն ենք, որ այս գործոնը եւս դեր է խաղում: Բայց եթե բաց է պաշտոնյաների աշխատանքը, ապա նրանցից որևէ մեկը պետք է պատասխանի մեր հարցին, թե ինչու է հանցագործությունների զոհ դառնում բարեկեցության սանդղակի ստորին խավը և ի՞նչ պաշտպանիչ դեր ունի դրամը ՀՀ զինված ուժերում»:** («Ինչու են աղքատները զոհվում բանակում»,http://www.lragir.am/armsrc/right57304.html)

Նրանցից մի մասին չի հաջողվում ապացուցել իրենց անմեղությունը և նրանք դատապարտվում են ծանրագույն պատիժների:

«**Հաճախ մարդիկ ուղղակի ի վիճակի չեն նույնիսկ գալ քաղաք, հետաքրքրվել մահացած տղայի քրեական գործով. նրանք պարզապես ֆինանսական միջոցներ չունեն: Ես գիտեմ այդպիսի ընտանիքների: Այդ պատճառով էլ գործերը հայտնվում են բարձիթողի վիճակում, էլ չեմ ասում, որ այդ մարդիկ հնարավորություն չունեն փաստաբան վարձել, ով կհետևի գործի ընթացքին և օրինականությանը: Հիմնականում շարքային զինծառայողներն են դառնում այդ թիրախը: Պատժվելիս ևս նրանք են թիրախ դառնում»:** («Շարքայինները թե զոհն են, թե պատժվողը»,

http://www.lragir.am/armsrc/right52881.html3)

Հաճախ այցելելով տուժած ընտանիքներին և լինելով Հայաստանի տարբեր բնակավայրերում, տեսնում ենք, որ մարդկանց մոտ մեծանում է դժգոհությունն ու բացասական վերաբերմունքը բանակի նկատմամբ, եթե չասենք ատելությունը: Վերջին տարիներին նեգատիվ վերաբերմունք բանակի հանդեպ մեծացել է և սրա մասին պետք է մտածեն պատասխանատուները: Պետք է նկատել, որ զոհերը, հիմնականում սոցիալապես ծանր պայմաններում ապրող և ցածր իրավագիտակցություն ունեցող մարդիկ են, որոնք հնարավորություն չունեն փաստաբան վարձել կամ զբավել գործի քննությամբ: Հայաստանից արտագաղթողներից շատերի հիմնական նպատակը իրենց տղաներին բանակից փախցնելն է:

ՊՆ քննչական ծառայությունը, ով զբաղված է այս գործերի քննությամբ գտնվում է ՊՆ ենթակայության տակ, այսինքն անկախ մարմին չէ և, բնականաբար, չի կարող այդ մարմինը կախվածություն չունենալ ՊՆ վերանախավից: Սա ևս լուրջ խնդիր է:

Մենք գործ ունենք երիտասարդ մարդկային կյանքերի կորստի հետ, որոնց մահվան դեպքերով հարուցված քրեական գործերը մնում են չբացահայտված, և նրանց հարազատներն ու հանրությունն այդպես էլ չի իմանում, թե իրականում ինչ է տեղի ունեցել: Ճիշտ է, ՊՆ նախարարն ասում է, որ ամեն ինչ անում է իրավիճակը շտկելու համար, բայց ասածի արդյունքը չկա, և այդ կոմերիտական-կարգհապահական միջոցառումները շատ հեռու են համակարգային փոփոխություններ կոչվելուց: Մենք այսօր չենք տեսնում այն կամքը, որ պետք է զինվորական վերնախավը դրսևորեր և փրկեր բանակը այս աղետալի վիճակից:

2008 թվականի մարտի 1-ին բանակը ներգրավվեց քաղաքական գործընթացներում: Ուստի բանակում ղեկավար դիրքեր (գերագույն գլխավոր հրամանատարից սկսած) զբաղեցնող կամ նրանց հովանավորությունը վայելող կազմը ինքնապաշտպանական բնազդով որպես իր առաջնային խնդիր է դարձնում բանակում ձևավորված՝ վարչակազմի գոյությամբ փոխպայմանավորված շահառուական համակարգի կառույցի և կենսունակության պահպանումը: Նրանք փորձում են բանակում այնպիսի մթնոլորտ և ներքին վիճակ ստեղծել, որ հնարավորինս այդ համակարգի ոչ մի ներկայացուցչի չնեղացնեն:

6. Ինքնիշխան և իրավատեր քաղաքացու կայացումը. զոհերի և նրանց հարազատների իրավունքների պաշտպանությունը

Մինչև 2008 թվականի մարտի 1-ը հայաստանյան լայն հասարակությունը գրեթե անտարբեր էր իրավապահ համակարգի աշխատանքի, դրա իրական նպատակների ու խնդիրների, գործունեության կազմակերպման և իրականացման սկզբունքների, ձևերի ու մեթոդների բնույթի և արդյունավետության նկատմամբ: Վերջին երեք տարիների ընթացքում հասարակության քաղաքական զարթոնքը հանգեցրեց նաև պաշտպանական համակարգի գործունեությանը ու դրանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ հասարակական հետաքրքրության շեշտակի աճին: Բնական է, որ առաջնային ուշադրության կենտրոնում հայտնվեց խաղաղ պայմաններում բանակում առկա զոհերի թեման:

Մամուլում այդ թեմայով կատարվող հրապարակումները, ինչպես նաև դրանց հետևող քաղաքացիական ակցիաները, հրապարակային քննարկումները, այդ թվում՝ փորձագիտական ռեսուրսի ներգրավմամբ, հետզհետե դարձան ավելի գրագետ, թիրախավորված ու համակարգված: Ինքնաբուխ կերպով ստեղծվեցին զանազան քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք սկսեցին եղանակ թելադրել հասարակական գիտակցության ոլորտում:

Այս պրոցեսում իր կարևոր դերակատարումն ունեցավ «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ-ն, որն իր կատարած փաստահավաք աշխատանքի արդյունքում հանրությանը ներկայացնում էր ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում տեղի ունեցող զինծառայողների մահվան դեպքերի մանրամասները: Մեր հրատապ այցերը Հայաստանի տարբեր մարզերում մահացած զինծառայողների ընտանիքներին շատ դեպքերում, ինչպես վերը նշված օրինակում օգնում են բացահայտել մահվան բուն պատճառները, ինչը զգաստացնում է զինվորական իրավապահներին: Հաճախ դրանք թաքցվում են հենց զորամասի ղեկավարության կողմից, ովքեր փորձում են մահվան դեպքը ներկայացնել այլ կերպ:

Բռնությունների զոհ դարձած Աղասի Աբրահամյանի մահվան դեպքը ուղղակի նպաստեց ոչ միայն հստակորեն ձևավորելու «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնությանը, այլև բողոքի ակցիաներով ընդվզելու բանակի ղեկավարության դեմ՝ պահանջելով վերջ դնել բանակում մահվան դեպքերին:

«Օգստոսի 26-ին «Եղնիկներ» զորամասում բռնի մահով զոհվել է 18-ամյա երևանցի Աղասի Աբրահամյանը, ով ընդամենը 9 ամիս հասցրեց ծառայել Ղարաբաղի պաշտպանական բանակում: Գնդի հրամանատար Սևոյանից հարազատները լսել են, որ Աղասին թունավորվել է: Նրան տարել են բուժմաս, այնտեղից՝ Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, որտեղ մահացել է: Իրականությունը հարազատները բացահայտել են դիահերձարանում: Տղայի մարմնի վրա նրանք խոշտանգումների բազմաթիվ հետքեր են հայտնաբերել՝ արյունոտ վերքեր կրծքավանդակի մասում, ոտքերի երկայնքնով և թաթերին, դեմքին, արյան զեղումներ երիկամների վրա: «Ականջն ընդհանրապես պոկված էր գլխից», - ասաց հարազատներից մեկը՝ Գեւորգ անունով, ով ներկա է եղել մարմնի զննմանը:

Դիահերձարանում Աղասի ծնողներին բացատրել են, որ մահվան անմիջական պատճառը գլխուղեղի վնասվածքն է եղել, իսկ զինկոմիսարիատը անհեթեթ պատճառաբանություն է բերել, թե հիվանդանոցում տղան անգիտակից վիճակում անզգույշ շարժում է արել, ընկել է երկու մահճակալների արանքը, գլխի վնասվածք է ստացել և մահացել:Խոշտանգումների հետքերը հարազատները լուսանկարել են և խոստանում են դրանք տեղադրել համացանցում, եթե տեսնեն, որ հանցագործության բացահայտումը սխալ ուղղությամբ է գնում»: (««Եղնիկների»» լռությունը,http://www.lragir.am/armsrc/right52355.html»)

Մամուլի հրապարակումների և այդ նախաձեռնությունների հետևանքով հասարակության ակտիվությունն այնքան բարձրացավ, որ կառավարող վարչակազմը ստիպված եղավ հրաժարվել անտարբերության և չարձագանքելու կեցվածքից և ի դեմս պաշտպանական և իրավապահ համակարգերի բարձրաստիճան ներկայացուցիչների՝ սկսեց հաշվի նստել հասարակական կարծիքի հետ: Ներկայումս լայնորեն քննարկվում են ոչ միայն կոնկրետ զոհերի իրավունքների պաշտպանության պրոբլեմները, այլև

պաշտպանական և իրավապահ համակարգերի հայեցակարգային բարեփոխման ուղիները, ձևերն ու մեթոդները:

Իր հերթին՝ այս քննարկումները հանգեցնում են պետությունը և նրա ինստիտուտները ժողովրդավարական սկզբունքերի հիման վրա բարեփոխելու անհրաժեշտության գիտակցմանը՝ ըստ այդմ ձևավորելով քաղաքացիական հասարակության կայացման նորանոր նախադրյալներ:

7. **Պետական համակարգի ինքնապաշտպանական ռեակցիան**

Բանակում տեղի ունեցած բռնությունների զոհերի ճակատագրի, նրանց ու նրանց հարազատների իրավունքների պաշտպանության նկատմամբ քաղաքացիական ակտիվության պայթյունը պետական համակարգն սկզբում ընկալեց ոչ ադեկվատ կերպով: Համակարգն անցավ «խուլ և շրջանաձև պաշտպանության»՝ զուգահեռաբար կիրառելով «արտագրոհների» մարտավարությունը: Ինչպես միշտ՝ ներքցիոն կերպով գործադրվեց արհամարհանքն ու անտեսումը, իսկ երբ դա արդյունք չտվեց՝ գռեհիկ ու պարզունակ քարոզչական մեքենան:

Այս գործին լծվեցին իշխանության վերահսկողության տակ գտնվող հեռուստաընկերությունները և զինվորական բարձր ղեկավարության ներկայացուցիչների մասնակցությամբ սկսվեց արշավը իրավապաշտպանների և լրագրողների նկատմամբ:

«Պաշտպանության նախարարության գլխավորած ՊՆ քննչական ծառայությունը իսկական մի արշավ է սկսել Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների ՀԿ անդամ լրագրողների դեմ, տարբեր քրեական գործերով նրանց «բերման ենթարկելով» որպես վկա: Քննչական ծառայություն կանչելու մեթոդներն ու ձևերը տարբեր են: Այս օպերացիան ստանձնել է ՊՆ քննչական ծառայության պետ, գեներալ մայոր Արմեն Հարությունյանը, իսկ ընթացքի վերաբերյալ տեղյակ են պաշտպանության համակարգի և դրան առնչվող այլ կառույցների ներկայացուցիչներ ևս»: («ՊՆ քննչականը ճնշում է գործադրում», http://hetq.am/arm/news/5767/)

Զինվորական իրավապահները այժմ էլ շարունակում են նույն քաղաքականությունը, ավելին, ՀՀ զինվորական դատախազը հրապարակայնորեն հայտարարեց, որ այսուհետև լրագրողները ստիպված են լինելու բացահայտել իրենց տեղեկատվական աղբյուրները, իսկ հրաժարվելու դեպքում՝ դրանք կբացահայտվեն դատական կարգով: Զինվորական դատախազի այս գաղափարը պաշտպանեց նաև ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

«Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը երեկլրագրողների հետ հանդիպման ժամանակ իր համերաշխությունն է հայտնել զինդատախազ Գևորգ Կոստանյանի վերջերս արված «ցուցումներին»՝ բանակում տեղի ունեցած միջադեպերի

մասին տեղեկություններ հրապարակող լրագրողներին պարտադիր քննչական մարմիններ հրավիրելն ու պարզաբանումներ տալը, տեղեկատվությանաղբյուրը բացահայտելը: Նախարարն ասել է, որ այս հրահանգը որեւէ կերպ չի սահմանափակում լրագրողի ազատությունը: Ակնհայտ է, որ իշխանությունները միասնական որոշում են կայացրել խստագույնս վերահսկողություն սահմանել բանակի խնդիրների վերաբերյալ վերջին տարիների միակ ձեռք բերման՝ հրապարակայնացման վրա: Հրապարակայնացում, որը ձեռք է բերվել լրագրողների և քաղաքացիական ակտիվիստների ջանքերով»: («Ի գիտություն Հրայր Թովմասյանի»,http://www.lragir.am/armsrc/right59364.html)

Առաջարկություններ

Զինված ուժերում մարդու իրավունքերի պաշտպանվածության խիստ մտահոգիչ վիճակը, հատկապես՝ կյանքի իրավունքի խախտման դեպքերը մեծապես պայմանավորված են Զինված ուժերի և իրավապահ համակարգի ու դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության համակարգային անկատարությամբ, որի հիմնական պատճառն այն է, որ դրանք ձևավորվել են խորհրդային իներցիայով՝ առանց գիտական ու գործնական իմաստավորման, ուստի չեն համապատասխանում արդի պայմաններին ու պահանջներին, մի զգալի մասով հակասելով Սահմանադրության, միջազգային իրավունքի և դրանց համապատասխան ընդունված օրենսդրության պահանջներին:

Վիճակը շտկելու նպատակով ստորև ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ, որոնք մշակվել են Զինված ուժերում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպության հրապարակումների, լրագրողական հետաքննությունների, ինչպես նաև «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության առաջարկների փաթեթի (փաթեթը մշակվել է 2011թ. սեպտեմբերի 14-ին՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, զինվորական պատասխանատուների, իրավապաշտպանների, սպանված զինծառայողների իրավահաջորդների և այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ տեղի ունեցած «Իրավիճակը հայկական բանակում» թեմայով քննարկման արդյունքների հիման վրա) հաշվառմամբ:

Ա. Զինված ուժերի ապաքաղաքականացում

1. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ վերաբերող օրենսդրության համապատասխանեցում ՀՀ Սահմանադրության պահանջներին՝ Զինված ուժերի ղեկավարման ու կառավարման հետևյալ համակարգի հաստատման նպատակով.

· Պաշտպանության նախարարին՝ որպես կառավարության անդամի, ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներին համապատասխան միայն պաշտպանության իրականացման ապահովման ոլորտի լիազորությունների

վերապահում՝ զրկելով Զինված ուժերի անմիջական ղեկավարում իրականացնելու լիազորություններից

· Պաշտպանության նախարարի տեղակալների և խորհրդականների մի մասի՝ նախկինից մնացած կամ նախկինի իներցիայով հետագայում ստեղծված զինվորական հաստիքների վերացում և գործող օրենսդրության համաձայն այդ հաստիքների վերածում հայեցողական պաշտոնների

· Պաշտպանության նախարարի և գլխավոր շտաբի պետի, ինչպես նաև պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի լիազորությունների տարանջատում և հստակում՝ ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներին համապատասխան

· Պատերազմի ժամանակ նշանակվող Զինված ուժերի գլխավոր հրամանատարի լիազորությունների օրենսդրական կանոնակարգում

· Զինված ուժերի գլխավոր շտաբի պետին խաղաղ ժամանակ, ինչպես նաև պատերազմի ժամանակ Գլխավոր հրամանատարի չնշանակվելու դեպքում Գլխավոր հրամանատարի փաստացի լիազորությունների վերապահման (համապատասխան բացառություններով) օրենսդրական կարգավորում,

2. 2008 թ. Մարտի 1-ի իրադարձություններին Զինված ուժերի ստորաբաժանումների մասնակցության իրավական գնահատական և Սահմանադրության պահանջների կոպիտ ոտնահարմամբ իրենց պաշտոնեական լիազորություններն անցած պաշտպանության նախարարի ու բարձրագույն հրամանատարական կազմի համապատասխան ներկայացուցիչների իրավական պատասխանատվության հարցի որոշում:

3. Զինված ուժերի զինծառայողների ընտրական իրավունքի կասեցում նրանց ծառայության ժամանակահատվածում՝ հաշվի առնելով զինվորական ծառայության օբյեկտիվ սահմանափակումների պատճառով զորամասերում ընտրական գործընթացների կազմակերպման ու անցկացման անհավասար ու սահմանափակ պայմաններն ու հնարավորությունները, մինչ օրս զինծառայողների կողմից իշխող քաղաքական ուժի օգտին բացարձակ ցուցանիշներով քվեարկելու նախադեպը, ինչպես նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ տարածքից դուրս գտնվելու ժամանակահատվածում քաղաքացիների ընտրական իրավունքի կասեցման՝ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշմամբ ամրագրված նախադեպը:

Բ. Կամավոր հիմունքներով մասնագիտական Զինված ուժերի ստեղծում

1. Կամավոր հիմունքներով մասնագիտական Զինված ուժերի ստեղծման հայեցակարգի մշակում և դրա հիման վրա կազմված ճանապարհային քարտեզին ու

ժամանակացույցին համապատասխան արդիական Զինված ուժերի ստեղծում՝ ներառյալ սերժանտական համակարգի ներդրումը:

Գ. Զինված ուժերում կանանց ներգրավում

1. Զինված ուժերում կանանց զինվորական ծառայության պայմանների ապահովում և կանանց լայն ներգրավում զինվորական ծառայության մեջ:

Դ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Զինված ուժերում ՀՀ քաղաքացիների ծառայության իրավական հիմքերի հստակեցում

1. ՀՀ և ԼՂՀ միջև համապատասխան պայմանագրաիրավական հիմքերի ձևավորում՝ ԼՂՀ-ում ծառայող ՀՀ քաղաքացիների իրավական կարգավիճակի և նրանց նկատմամբ ենթադատությանհարցերի, ինչպես նաև նրանց իրավունքների լիարժեք ապահովման մեխանիզմների ստեղծման նպատակով:

Ե. Իրավապահ համակարգի և օրենսդրության ներդաշնակեցում

1. Ներկայումս գործող խորհրդային դատավարական մեխանիզմների և իրավապահ մարմինների համակարգի համապատասխանեցում ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի պահանջներին.

· Նախաքննության օղակի՝ քննչական համակարգի վերացում,

· ՀՀ Ոստիկանության համակարգում միասնական հետաքննչական համակարգի ստեղծում՝ վերացնելով այդպիսի գործառույթներ ունեցող բոլոր մյուս գերատեսչությունների համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց, այդ թվում ՝ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության և զորամասերի հրամանատարների հետաքննչական լիազորությունները /զորամասերի հրամանատարներին վերապահելով միայն մինչև ոստիկանության ժամանումը դեպքի վայրի պահպանության և հետաքննության ապահովման հետ կապված սահմանափակ լիազորություններ

· ՀՀ-ում ռազմական արդարադատության համակարգի և օրենսդրության բացակայության պայմաններում գործող ավելորդ օղակների՝ ՀՀ զինվորական դատախազության և ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վերացում՝ վերջինիս փոխարեն ստեղծելով պարեկապահակային ծառայություն

· Հանցագործությունների որակման, փորձաքննությունների կատարման, գործերի քննության ընթացքում Զինված ուժերի կեղծ իմիջի ձևավորման և մեղավորների կոծկման արատավոր գործելակերպից հրաժարում, այդ նպատակով հասարարական վերահսկողության մեխանիզմների ապահովում:

Զ. Զինված ուժերում կատարված հանցագործություններից տուժածների իրավունքների պաշտպանության ապահովում

1. Տուժողների իրավունքների և շահերի պաշտպանության գործուն համակարգի ձևավորում, այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական և կառուցվածքահամակարգային փոփոխություններ, ձևավորելով տուժողների ներկայացուցիչների և նրանց շահերը ներկայացնող պաշտպանական կողմի հետ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կառուցողական գործակցության համակարգ ու մեխանիզմներ, ինչպես նաև տուժողներին և նրանց ընտանիքների անդամներին բարոյական ու նյութական արժանապատիվ փոխհատուցման պայմաններ ու մեխանիզմներ:

Է. Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և հասարակական վերահսկողության գործուն մեխանիզմների ձևավորում

1. Զորակոչի գործընթացի ամբողջական վերանայում և համապատասխանեցում արդի չափանիշներին, մասնավորապես՝ զորակոչի թափանցիկացում, զորակոչիկների առողջական չափանիշների խստացում, զորակոչիկների առողջական վիճակի զննության ընթացքում անկախ փորձագետների ներգրավում, զորակոչիկների բաշխման հստակ, արդարացի և հայեցողականությունը բացառող մեխանիզմների ձևավորում, բժշկական հանձնաժողովների նկատմամբ զորակոչային հանձնաժողովների հսկողության բացառում՝ այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

2. Մահվան ելքով դեպքերի հետաքննչական և դատաքննչական նյութերի պարտադիր հրապարակում՝ այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

3. Միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնագրքի մշակում և ընդունում (ներգրավելով նաև անկախ փորձագետների), որը մասնավորապես պետք է ապահովի զինծառայողների կարգապահական պատասխանատվության հստակ մեխանիզմներ, պարունակի կոնկրետ կարգապահական զանցանքների և դրանց դիմաց կոնկրետ կարգապահական տույժերի համակարգ, բողոքարկման հստակ մեխանիզմներ ու երաշխիքներ, հրամանատարների պատասխանատվության գործուն մեխանիզմներ, բացառի կարգապահական կալանքը կամ ազատության սահմանափակման այլ ձևերը և այլն:

4. Զինված ուժերում տեղի ունեցած դժբախտ դեպքերի ու պատահարների և կարգապահության վիճակի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պաշտպանության նախարարի տարեկան բաց հաշվետվության օրենսդրական հիմքերի և ավանդույթի ստեղծում:

5. Բարձրագույն և ավագ հրամանատարական ու սպայական կազմի զինծառայողների եկամուտների հայտարարագրում և ամենամյա բաց հրապարակում:

6. Զինված ուժերի կարիքների համար կատարվող գնումների գործընթացի ապագաղտնիացում (բացառությամբ ռազմական տեխնիկայի, սպառազինության և զենքի ձեռքբերումները) և դրանց թափանցիկության ապահովում:

7. Զինծառայողի, հատկապես սպայի օրինակելի կերպարի ձևավորման պետական քաղաքականության մշակում և իրականացում, այդ նպատակով զինծառայողի վարքականոնի մշակում և ընդունում:

8. Զինված ուժերում կադրերի կրթության, առաջխաղացման և ընտրազատման արդիական ու թափանցիկ համակարգերի ձևավորում, մասնավորապես՝ ռազմական կրթության համակարգի ինտեգրում հանրապետության կրթական համակարգին, թափուր պաշտոնների համալրում բաց մրցույթներով և այլն: